

Թ Ի Ի 18

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1913-14 ՇՐՋԱՆԻ

ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՆԵՆ ԵՏՔԸ

ՆԻՍՏ ԺԷ.

25 Հոկտեմբեր 1913



Տպագրութիւն Տ. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, Պապր-Ալի Ճաւոնէսի, Թիւ. 49

1914

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ, ԲՆԴՃ. ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1913—1914 ՆԱՏԱՇՐՁԱՆԻ

ՆԻՍՏ ԺԷ.

25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1913

ՆԱԽԱԳԱՀ.—ՊԱՏՐ. ՏԵՂԱՊԱՀ Տ. ԳԱՐՐԻԷԼ ՍՐԲԱԶԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ.—ՏՐ. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ ԷՖԷՆՏԻ

ՕՐԱԿԱՐԳ

Քննութիւն Երուսաղէմի Ա. Յակոբեանց վանքի կանոնագրութեան ծրագրին

ԲԱՅՈՒՄ ԺՈՂՈՎՈՅ

Նիստը տեղի ունեցաւ Ղալաթիոյ Խորհրդարանը, եւ ժամը 3ին ատենը բացուեցաւ ի ներկայութեան 60 երեսփոխաններու, որոնց թիւը յետոյ յանգեցաւ 73ի:

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.—Ատենը բացուած է ի ներկայութեան 60 երեսփոխաններու: Ա. Գասպարեան ԷՖ. ճամբորդութեան պատճառաւ կը բացակայի, կ'արձանագրենք զինքը օրինաւոր բացակայ: Տ. Թորգոմ եպսկ. հեռագիր մը ունի պիտի կարդանք:

(Ատենադպիր ԷՖ. կարդաց հետեւեալ հեռագիրը):

Մայր Դիւանին,

Իբրեւ պաշտօնեայ Հայ Եկեղեցւոյ, Սահմանադրութիւնը ընդհանրացնող որոշումնիդ կը շնորհաւորեմ հիացմամբ:

Թորգոմ եպիսկ.

ԱՏԵՆ. ԷՖ.— Անշուշտ կը հասկցուի

թէ ասիկա կը վերաբերի մեր Բողոքական եղբայրներու մեզի հետ համագործակցութեան Գոհութեամբ կ'արձանագրենք:



ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆԻ ԵՐԵՍՓՈՒՅԱՆՈՑ

ԱՏԵՆ. ԷՖ.— Մեր պաշտօնակիցներէն երկուքը գիր մը ունին զոր պիտի կարգանք:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ գիրը):

Ազնուաշուք Ատենապետ էֆէնտի Ազգային Պատկ. Ընդհ. Ժողովոյ

Վստահելի աղբիւրէ տեղեկացած ըլլալով որ Ատարազարի ցաւալի ղէպներուն առթիւ, Վիճակին Առաջնորդ Տ. Ստեփաննոս արքեպօսկ. Յովակիմեան, շատ անձնուրաց եւ շրջանայեաց դեր մը կատարած է հանդէպ իր հօտի շահերուն պաշտպանութեան, կ'առաջարկենք որ Ազգ. Երեսփ. Ժողովը պարտք դնէ Կեդրոնական Վարչութեան վրայ՝ շնորհակալութիւն յայտնել Ն. Սրբազնութեան առ ի քաջալերութիւն:

Մնամք յարգանք

Ազգ. երեսփոխաններ

Ն. Զաքարեան, Յ. Աւետիսեան

ԱՏԵՆ. ԷՖ.— Այս գիրը կը յղենք Վարչութեան:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Ինչո՞ւ համար է այդ շնորհակալութիւնը, իր պարտքը կատարած ըլլալուն համար: Ասոր համար հարկ չկայ շնորհակալութիւն յայտնելու:

ԱՏԵՆ. ԷՖ.— Իբր գնահատութիւն, ժողովը կ'ընդունի՝ այս գիրը յղել Վարչութեան:

ԶԱՅՆԵՐ.— Շատ լաւ:

ՊԱՇՏՈՆԱԳԻՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԱՏԵՆ. ԷՖ.— Եկեղեցական համագումար ժողովով երեսփոխան ընտրուած Տ. Անանիա վրդ.ի մասին ժողովիս յանձնարարութեան համաձայն Վարչութիւնը պէտք եղած քննութիւնը կատարելով զրկած է մեզ հետեւեալ պատասխանը:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ գիրը):

Ազնուաշուք Ատենապետ էֆէնտի

Ազգ. Պատկ. Ընդհ. Ժողովոյ

Պատկ. Ժողովը՝ տարւոյս Ապրիլ 4 թուականաւ գրովն՝ եկեղեցական երեսփոխանաց ընտրութեան տեղեկագրին առթիւ, որ մատուցուած է անցեալ տարւոյ Նոյ. 17ին, յանձնարարած էր՝ նորընտիր երեսփոխաններէն Տ. Անանիա Մ. վրդ. Հաղարապետեանի, Երուսաղիմայ Միաբանութեան, եւ գաւառական պաշտօններ չստանձնելու մասին, արձանագրական տեղեկութիւններ քաղել եւ հաղորդել ժողովին:

Այս յանձնարարութեան համաձայն՝ հարկ եղած քննութիւնը կատարուեցաւ, եւ նախկին արձանագրութիւններէ կը տեսնուի որ՝ Երուսաղէմէն հաղորդուած տեղեկութեանց վրայ, Տ. Անանիա վրդ. Վանուց Տնօրէն Ժողովին եւ Ս. Պատրիարքին որոշումով Միաբանութեան արձակուած է, եւ այս պարագան 1908 Յուլիս 24 թուականաւ գրով մ'ալ Կ. Պոլսոյ Ս. Պատրիարքին կողմանէ ծանուցուած է յիշեալ վարդապետին:

Իսկ գալով անոր գաւառ. պաշտօն չստանձնելու պարագային, Տ. Անանիա վրդ. հիւանդութեան պատճառաւ 1911ին չէ կրցած Չմշկածագ ուղեւորել, ինչպէս այն ատենի բժշկական տեղեկագիրն կը յայտնէ, եւ թէ իր այս հիւանդ վիճակը կը չարունակուի տակաւին, որ անպացուցած է բժշկական երկու նոր տեղեկագրերով:

Մնամք խորին յարգանք

Ի դիմաց Ազգ. Կեդր. Վարչ. Խառն Ժողովոյ

Դիւան Կրօնական Ժողովոյ

Ատենադպիր Բ. Ատենապետ

Սր. Վ. Փետրեանեան Հմ. եպս. Դիմախեան

Դիւան Քաղ. Ժողովոյ

Վ. Ատենադպիր Ատենապետ

Տօթ. Կ. Փաւայեան Ս. Գաւառեան

ԱՏԵՆ. ԷՖ.— Այս պարագան այսպէս կը լուսաբանուի ուրեմն, եւ կը մնայ Տ. Անանիա վրդ.ի վաւերացումը ժողովիդ գնահատման կ'ենթարկեմ զայն:

Տ. ԵԶՆԻԿ ՎՐԴ. ՊԱՊԱՆԱՆ.— Կարծեմ ժողովը քուէարկած է արդէն եւ Անանիա վրդ. Կրօն. Ժողովոյ մէջ պաշտօն ունենալով, կրնայ այս ժողովին ալ գալ:

ԱՏԵՆ. ԷՖ.— Իբր Կրօն. Ժողովոյ անդամ կրնայ հոս գալ, բայց քուէ չի կրնար ունենալ: Իսկ իբր երեսփոխան հոս ներկայ գտնուելու եւ ձայնի իրաւունք ունենալու համար պէտք է այս ժողովը որոշում տայ:

ՀԱՅԿ ԷՖ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ.— Ժողովը իր երեսփոխանութիւնը կախակայեց եւ չվաւերացուց, եւ սակայն այս միեւնոյն ժողովը զինքը Կրօնական Ժողովի անդամ ընտրեց. ժողովը այս կերպով հակասութեան մէջ մնաց:

Տ. ԵԶՆԻԿ ՎՐԴ. ՊԱՊԱՆԱՆ.— Ուստի այժմ իր երեսփոխան հռչակուելուն առարկութիւն մը չի կրնար ըլլալ:

(Ատենապետ էֆ. քուէի դնելով Տ. Անանիա վրդ.ի երեսփոխանութիւնը ընդունուեցաւ մեծամասնութեամբ):

ՎԱԻԵՐԱՑՈՒՄ ԵՐԵՍՓՈՒՅԱՆՈՑ

ԱՏԵՆ. ԷՖ.— Կիւրինի երեսփոխանական ընտրութիւնը կատարուած ըլլալով անաւասիկ այդ մասին Վարչութեան պաշտօնագիրը:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ գիրը):

Վսեմ. Ատենապետ էֆէնտի

Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ,

Կիւրինի Գաւառական Ընդհանուր Ժողովին կողմէ վախճանեալ երեսփոխանին տեղ ըստ հրահանգի Պատրիարքարանիս նոր ընտրութիւն կատարուած եւ Հոկտ. 9 թուականաւ տեղեկագրով ներկայացուած է արդիւնքը, յորմէ կը տեսնուի թէ Ազն. Արամ էֆ. Անտօնեան ազգային երեսփոխան ընտրուած է միաձայն հաւանութեամբ:

Ազգային Կեդր. Վարչութեան Քաղաքական Ժողովս Սահմանադրութեան 81րդ

յօդուածին համաձայն ստուգելով նորընտիր երեսփոխանին ընտրելութեան պայմաններն՝ ըստ ամենայնի համաձայն գտաւ Սահմանադրութեան արամադրութեանց, եւ հետեւաբար՝ ընդ գրոյս Պատկ. Ժողովիդ կը մատուցանէ ընտրական տեղեկագիրն:

Մնամք յարգանք

Ի դիմաց Քաղաքական Ժողովոյ

Վ. Ատենադպիր Ատենապետ

Տր. Կ. Յ. Փաւայեան Ս. Գաւառեան

(Ատենապետ էֆ. քուէի դնելով այս ընտրութիւնը, Արամ էֆ. Անտօնեան հռչակուեցաւ Կիւրինի ազգ. երեսփոխան):

ՀԱՐՑՈՒՄ ԵՐԵՍՓՈՒՅԱՆՈՑ

ԱՏԵՆ. ԷՖ.— Մեր պաշտօնակիցներէն Տր. Արգարեան էֆ. հետեւեալ հարցումը ուղղած է ժողովիս:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ գիրը):

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի

Ազգ. Պատկ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ

Մօտաւորապէս երկու ամիս է Գատըզիւղէն խիստ ծանրակշիռ խնդիր մը երեւան հանուեցաւ եւ ի լուր աշխարհի մամլոյ սիւնակներ լեցուց, եւ ուրախալի է որ երեւան եկան այն ատեն անշահախնդիր եւ անաչառ ազնիւ անձնաւորութիւններ, որոնք հրապարակաւ դատաւիտեցին զեղծումն ու զեղծարարները եւ պահանջեցին նոյն իսկ բեկանել ապօրինի եղած ընտրութիւն մը եւ այսպէս անձնական թեր ու ղէմ լրագրական բանավէճէ մը վերջ, խնդիրը պահ մը վայելեցաւ փափկեցաւ, ու մարեցաւ երթալու համար կարգ մը իր նմաններուն քով: Խօսքս Զուլեհեան ապօրինի սանին ընտրութեան մասին է:

Խնդրոյ առարկան զեղագործ Մամուէլեան էֆ. իբրեւ անկարող եւ չքաւոր ցոյց տրուելով, կտակի մը շատ բարի տրամադրութիւններէն կ'օգտուի եւ որքին ու չքաւորին յատկացուած իրաւունքը կոր-

զերիվ, ազդեցիկ պաշտպաններու շնորհիւ կ'ապահովէ իր զաւկին յեւրոպա ուսումը: Հետեւաբար Ա.զգ. գերագոյն ժողովս, որ վերին հսկողն է ընդհանրապէս Ա.զգին եւ նամանաւանդ որքին ու կարօտին իրաւանց պաշտպանութեան անթերի գործադրութեանը, եթէ իրերը թողու այսպէս իրենց քմահաճ ընթացքին եւ նոյն իսկ սրբազան կտակի մը տրամադրութիւններուն չարաչար օտանակութեանը դէմ անաշուորէն չվարուի, կը կարծեմ թէ յոռի նախընթաց մը պիտի ստեղծուի, ի ըստ լերութիւն ու բիշներու:

Ուստի վերոյիշեալ խնդիրը, որուն մանրամասնութիւններուն ամէնքս ալ ծանօթացանք հրապարակային յայտնութիւններէ, յանձնելով ժողովիդ նկատառման, կը խնդրեմ որ խնդրին աւագ կարեւորութիւնը նկատի առնելով ստիպողութիւն տրուի եւ պատկանեալ մարմինոյն քով պէտք եղածն ի պաշտօնէ կատարելով արդարութիւնը լոյս աշխարհ բերուի, որովհետեւ ցարդ Զունդեան յանձնաժողովը այս առթիւ չի բարեհաճեցաւ իր պաշտօնական բացատրութիւնը տալ ի լուսաբանութիւն հանրութեան:

Մնամ խորին յարգանք
Տր. Մ. Աբգարեան

ԱՏԵՆ. ԷՖ.— Թէեւ իբր իզմիրեանց Յանձնաժողովի անդամ կրնամ այս մասին բացատրութիւններ տալ, բայց ատենապետի հանգամանքս կ'արգիլէ:

ՊԱՐԳԵՒ ԷՖ. ՓԱՓԱԶԵԱՆ.— Կ'առաջարկեմ որ վարչութեան յանձնուի այս գիրը եւ պէտք եղած բացատրութիւնը պահանջուի: Յետոյ խնդիրը թող հոս գայ եթէ ամբաստանութեան մը ձեւը կ'առնէ այն ատեն նկատողութեան կ'առնենք:

Մ. ԷՖ. ՀԱՅԿԱԶՆ.— Փափաքելի է որ այս խնդիրը հոս չբերուի:

ԱՐՄԵՆԱԿ ԷՖ. ԲԱՐՍԵՂԵԱՆ.— Վարչութիւնը այդ գէղքը գիտէ արդէն եւ

աւելորդ բան պիտի ըլլար նորէն իրեն զրկել: Գոնէ՛ մէկ երկու օրէն հոս բերէ զայն:

ԱՏԵՆ. ԷՖ.— Ուրեմն ժողովը կ'ընդունի որ այս գրերը զրկուին վարչութեան որպէս զի հարկ եղած լուսաբանութիւնը բերէ:

ՊԱՇՏՈՆԱԳԻՐ ՏՈՒՐԲԻ ՄԱՍԻՆ

ԱՏԵՆ. ԷՖ.— Ազգ. ատուքի մասին վարչութիւնը հետեւեալ պաշտօնագիրը ղրկած է մեզի:

(Ատենադպիր ԷՖ. կարդաց հետեւեալ գիրը:)

Վսեմաշուք Ատենապետ Էֆէնտի

Ազգ. Երեսփ. Ընդհ. ժողովոյ

Ազգային Կեդր. Մտտուկի հասոյթներն արդիւնաւորելու եւ անոր յարատեւ անձկութեան միանգամ ընդ միշտ դարման մը տանելու, ինչպէս նաեւ ազգային գործերուն մէջ ազգայիններու եւ Ազգ. հաստատութեան փոխադարձ իրաւունքները եւ պարտականութիւնները միանգամ ընդ միշտ կանոնաւորելու համար, Բաղաձական ժողովը Տնտեսական Խորհրդոյ եւ Ելեւմտից Հոգաբարձութեան հետ համախորհուրդ անհրաժեշտ դատեց ազգային ընդհանուր տրոց կանոնադիրը բարեփոխելով իր պատճառաբանեալ տեղեկագրով ընդ գրոյս Պատկառելի ժողովիդ մատուցանել, խնդրելով որ Ազգային Պատկ. ժողովը ստիպողաբար հաճի նկատողութեան առնուլ, եւ յետ վաւերացման յանձնել վարչութեան ի գործադրութիւն:

Մնամք յարգանք

Ի դիմաց Բաղաձական ժողովոյ

Վ. Ատենադպիրի Ատենապետ
Տր. Կ. Յ. Փաշայեան Ս. Գաբաւան

ՀԱՅԿ ԷՖ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ.— Լաւագոյն է որ յղենք Համարակալութեան Դիւանին:

ՎԱՀԱՆ ԷՖ. ՓԱՓԱԶԵԱՆ.— Բայց ժամանակամիջոց որոշենք:

ԱՏԵՆ. ԷՖ.— Ուստի 15 օրէն պահանջելու համար ղրկենք Համարակալութեան Դիւանին:

ԱՏԵՆ ԷՖ.— Տարին վերջ կը գտնէ եւ պիտեմքն քննուած չէ: Բնական է որ Համարակալութեան Դիւանը պիտի փութացնէ զայն: Բայց Դիւանին երկու անդամները քաջուած են եւ չեն գործակցիր: Ուստի կը խնդրենք Պարգեւ Էֆ. Փափազեանէ և Խաչիկ Էֆ. Սվաճեանէ որ աջակցին իրենց ընկերներուն եւ պիտեմքն քննութիւնը աւարտի:

ՊԱՐԳԵՒ ԷՖ. ՓԱՓԱԶԵԱՆ.— Բայց Դիւանը ապացոյց ունի՞ մեզ ամբաստանելու:

ԱՏԵՆ. ԷՖ.— Թէեւ գրաւոր չունիմ, բայց Շիրինեան Էֆ. կ'ըսէր թէ մէկ քանի անգամներ եկած բայց չէ կրցած գտնել իր ընկերները:

ԵԴ. ՇԻՐԻՆԵԱՆ ԷՖ.— Ամբաստանութիւն չկայ, եղած հարցումը մը պատասխանը միայն տրուած է:

ԱՏԵՆ. ԷՖ.— Յետոյ գալով Դաստիարակութեան Դիւանին, երկու անդամները քաջուած են եւ կը մնայ միայն Հրանտ Էֆ. Ասատուր: Ես կ'առաջարկեմ որ Խաչատրեան եւ Նաթանեան Էֆ.ները որոնք արդէն գործին մարդն են, անդամակցին Դիւանին ժողովը եթէ կ'ընդունի, զիրենք կը հռչակենք Դաստիարակութեան Դիւանին անդամ:

ԶԱՅՆԵՐ.— Շատ լաւ:

ԱՏԵՆ. ԷՖ.— Նախաձեռնութեան Դիւանէն անդամ մը, այն է Մեծատուրեան Էֆ. Էֆ. մեկնած է: Անոր տեղ կ'առաջարկեմ Շահրիկեան Էֆ.ն:

ԶԱՅՆԵՐ.— Շատ լաւ:

ԱՏԵՆ. ԷՖ.— Դալով Ապահովութեան Յանձնաժողովին, Թէքեան Էֆ. մեկնած է: Կ'առաջարկեմ անոր տեղ նշանակել Խօճասարեան Էֆ.ն:

ԶԱՅՆԵՐ.— Շատ լաւ:

ԱՏԵՆ. ԷՖ.— Ժողովը կ'ընդունի Խօճասարեան Էֆ.ի անունումը Ապահովութեան Յանձնաժողովին: Ուստի անցնինք օրակարգին:

ՕՐԱԿԱՐԳ

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ԿԱՆՈՆԱԳՐԻՆ

ԱՏԵՆ. ԷՖ.— Ինչպէս գիտէք, Երուստղէմի կանոնադրին 3 յօդուածները նախապէս ընդունուած են, իսկ ակիզքէն սկսելով կանոնադիրը յօդուած առ յօդուած քուէարկելու համար խորհրդակցութիւններ տեղի ունեցած են, այնպէս որ կը յուսանք այսօր բաւական յօդուածներ քուէարկել, պայմանով որ կարգաւ խօսք առնուի եւ խօսուի:

Տ. ՎԱՀՐԱՄ ԱՐԲԵՊՍԿ.— Առաջին յօդուածին միաբանաց շարքին մէջ, աւագ դպրի յիշատակութիւն մը կայ: Հայ Եկեղեցին աւագ դպր չունի, այլ պարզ դպր, որոնք Միաբանութեան մաս չեն կազմեր. հետեւաբար պէտք է վերջուի անոնց շարքէն:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Հայաստանեայց Եկեղեցին աւագ դպր ունի թէ ոչ, կը խոստովանիմ որ չեմ գիտեր: Միայն օտկայ որ եթէ Երուստղէմի համար, հոգեւորականութեան կողմէ պատրաստուած այդ նախկին կանոնադրութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ ոգւոյն հակառակ է, յանցանքը մերը չէ:

ՍՄԲԱՏ ԷՖ. ԲԻՒՐԱՏ.— Միաբանութիւն ըսելով՝ երկու բան կը հասկնանք: Մէյ մը ամբողջ Ս. Տեղիքը պաշտպանողները՝ որոնց մէջ քրճազպեացներ ալ կը գտնուին, եւ մէյ մըն ալ Միաբանական ժողովին մասնակցողները: Հիմա այս յօդուածով կը հասկցուի թէ Միաբանութեան մաս կը կազմեն եպիսկոպոսներ վարդապետներ եւ սարկաւազներ միայն:

Տ. ԵՋՆԻԿ ՎՐԴ. ՊԱՊԱՆԵԱՆ.— Բրդազպեացները միաբան են, բայց Միաբանական ժողովի մէջ ձայն ու քուէ չունին:

սակայն անոնք ալ վանքին մէջ իրենց ծառայութեան կարեւոր բաժինը ունին:

ԱՏԵՆ. ԷՖ.—Այսինքն թէ քրդազգեացն երբ պէ՞տք է ընդունուին իւր Միաբանութեան անդամ:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Ի պաշտօնէ միաբան ճանչցուածները նախորդ կանոնադրին մէջ որոշուած են, մինք ալ այդպէս ընդունեցինք:

ԱՏԵՆ. ԷՖ.— Այս մասին ուրիշ դիտողութիւն ունի՞ք:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Բոլոր միաբաններու պարտքի ու իրաւունքի մասին առանձին ներքին կանոնադրութիւն պատրաստուած ատեն՝ առանձին տրամադրութիւններ պիտի գտնուին: Այս առաջին յօդուածով յիշուածը պաշտօնապէս Միաբանական Ժողովոյ անդամ ճանչցուած միաբաններն են:

Տ. ՀՄԱՅԵԱՆ ԱՐՔԵՊՍ.— Հին կանոնագրին մէջ յիշուած են նաեւ քրճազգեացները եւ մայրապետները: Կ'ուզէի գիտնալ թէ ատոնք բոլորովին դո՞ւրս ձգուած են թէ ուրիշ յօդուածի մը մէջ պիտի յիշատակուին:

ԱՏԵՆ. ԷՖ.— Շահրիկեան էֆ. ըսաւ թէ մասնաւոր յօդուած կայ:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Կարծեմ սխալ հասկցուեցաւ: Ընդհ. Ժողովի մասնակցող միաբաններու յատուկ յօդուած է այս. իսկ սոյնկանոնագրին մէջ քրճազգեացներու եւ մայրապետներու մասին յօդուած չկայ: Առանձին պիտի մշակուին անոնք: Այստեղ բերուած են միայն ոչ—կրօնական խնդիրներ շոշափող ու միայն մատակարարական ու վարչական հարցերու հետ առնչութիւն ունեցող տրամադրութիւններ:

ԳԵՂԱՄ ԷՖ. ՏԵՐ-ԿՍՐԱՊԵՏԵԱՆ.— Ատոնք եկեղեցական խնդիրներ են. պէտք է ուշադրութիւն ըլլայ անոնց ճշտութեան մասին: Ես կը կարծեմ թէ միաբանները եկեղեցականներն են. իսկ քրճազգեաց-

ները են տարբեր են, ու եկեղեցական չեն համարուիր:

Հ. ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ ԷՖ.— Միաբանական նախորդ կանոնագրին մէջ տեսանք որ իրաւունքով միաբաններ են մինչեւ սարկաւազ եղողները: Իսկ քրճազգեացները իրականութեան մէջ միաբան չեն, միաբանութեան աշխատանքը որոշ է, իսկ անոնք վարդապետներու կը ծառայեն Նոյնպէս եւ Ժառանգաւորացի ուսանողներն ալ միաբան կը նկատուին, սակայն որովհետեւ որոշեալ տարիքը կը պակսի իրենց, անոր համար միաբանութեան մէջ ձայնի ու քուէի իրաւունք չունին: Ապաստելութեան ճիւղ մը կայ՝ աւելածութեան են. համար, ատոր մէջ ծառայողներու թիւը պիտի ճշդուի խնամակալութեան կողմէ: Պէտք է դիտել սակայն որ քրճազգեացներու քուէի իրաւունք տալ կարելի չէր, որովհետեւ կեանքի մէջ ձախողութիւններ եւ չաջողածներ կը գտնուին եւ ատոնց մէջ կաղը, Կոյրը եւ գօսացեալն ալ կայ, հոն կը դիմեն ապրելու համար, ինչպէ՞ս կարելի է ատոնց միւս միաբաններու հաւասար իրաւունք տալ: Նոր օրէնքով, միաբանութեան թիւը սահմանափակուած է, ուշադրութիւն ըլլալով որ առիթ չտրուի կամէականութեանց եւ անոնցմէ յառաջ եկած անտեղութեանց:

ԱՏԵՆ. ԷՖ.— Խօսածսարեան էֆ. այս բացատրութիւնները գոհացում տուին անշուշտ: Մենք արդէն ընդունեցինք միաբանութիւնը հետեւեալ կերպով. եպիսկոպոս Յ, վարդապետ 46, սարկաւազ 18 գումար 70: Այս լուսաբանութիւններէն ետքը ամէն անոնք որ կ'ընդունին այս տրամադրութիւնը թող ձեռք բարձրացնեն: Ստուար մեծամասնութեամբ ընդունուած է այս առաջին յօդուածը:

Յօդ. 1.— Միաբանութիւնը, որուն պետն է Պատրիարքը, կազմուած է եպիսկոպոսներէ, վարդապետներէ եւ սարկաւազներէ:

Տ. ԵՂՆԻԿ ՎՐԴ. ՊԱՊԱՅԱՆ.— Այդ 70 թիւը քիչ կը գտնեմ, որովհետեւ միաբաններու համար շատ պաշտօններ կան:

Ա. ԷՖ. ԲԱՐՍԵՂԵԱՆ.— Ընդհակառակը ես ալ շատ կը գտնեմ այդ թիւը: Արդեօք ի՞նչ պաշտօններ յաւակցուած են այդ 70 միաբաններուն: Գաւառի մէջ պաշտօնի համար երուսաղէմի միաբան ըլլալու պէտք չկայ կարծեմ:

Հ. ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ ԷՖ.— Եթէ ուրիշ գիտողութիւն ընող չկայ՝ պատասխանեմ: 70 թիւը բաւական նկատուեցաւ, 7ը՝ Տնօրէն Խորհուրդի իւր անդամ, իսկ միւսները՝ վարչական պաշտօններու համար: Թափոններուն համար, բաւական թուով վարդապետներու պէտք կայ, նոյնպէս պաշտօն չունեցող վարդապետներ Սուրբ Խեղեաց շարունակական ծառայութեան համար պիտի գործածուին: Գալով տեսչութեան, ատոր պէտք կայ ա՛յն տեղերուն մէջ ուր կրօնական արարողութիւն կ'ըլլայ: Այս խօսքերը կարծեմ կրնան պատահան նկատուիլ Բարսեղեան էֆ. այն նկատողութեանը թէ 70ը շատ է, երբ նրկասի առնուի երուսաղէմի վանքին պատմական կարեւորութիւնը, այն ատեն պիտի տեսնուի որ 70ը շատ չէ. եթէ կ'ուզենք որ երուսաղէմը իր բարձր դիրքին վրայ մնայ, պէտք է որ պահենք 70 թիւը:

ՉԱՅՆԵՐ.— Քուէ:

ԱՏԵՆ. ԷՖ.— Աւագ մեծամասնութեամբ ընդունուած է հետեւեալ Բ. ըդ յօդուածն ալ:

Յօդ. 2.— Միաբանութեան անդամներուն թիւը սահմանուած է հետեւեալ կերպով.

Պատրիարք	1
Եպիսկոպոսներ	5
Վարդապետներ	46
Սարկաւազներ	18
	70

Միաբանութեան վերոյիշեալ ընդհանուր եւ ստորաբաժանեալ թիւերը այն ատեն միայն կրնան փոփոխութեան ենթարկուիլ երբ Միաբանութեան Ընդհանուր Ժողովը, վանքի կրօնական վարչութեան անթերի կատարումին համար անհրաժեշտ պէտքը տեսնէ փոփոխութեան

եւ պատճառաբանեալ տեղեկագրով յայտարարէ Ազգ. Կեդր. վարչութեան Խառն Ժողովին, եւ այս վերջինն ալ փոփոխութեան առաջարկը իւրացնելով զայն ենթարկէ Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովի քննութեան ու վաւերացումին: Փոփոխութիւնը կ'իրագործուի Երեսփ. Ընդհ. Ժողովին առաջարկին ընդունուելէն եւ ըստ այնմ այն յօդուածը բարեփոխուելէն ետքը միայն:

ԱՏԵՆ. ԷՖ.— Երրորդ յօդուածը անփոփոխ կը մնայ:

Յօդ. 3.— Պատրիարքին կամ Տեղապահին ընտրութեանց եղանակը սահմանուած է Թուրքիոյ Հայոց Ազգ. Սահմանադրութեան 21, 22, 23 յօդուածներով:

ԱՏԵՆ. ԷՖ.— Չորրորդ յօդուածը արդէն վաւերացուած է ասկէ առաջ:

ՅՈՎՀ. ԷՖ. ՉԵՕԿԻՒՐԵԱՆ.— Հինգերորդ յօդուածով սահմանուած միաբանական ընտրելին ընդունելութեան պայմանը ճշգրտա՞ծ է:

ԱՏԵՆ. ԷՖ.— Այո՛, չորրորդ յօդուածին մէջ:

Մ. ԷՖ. ՀԱՅԿԱԶՆ.— Ընտրուած անդամը միաբան կը նկատուի, ըսուած է մութ է:

Տ. Ե. ՎՐԴ. ՊԱՊԱՅԱՆ.— Այս կանոնադիրը կարգ մը պայմաններ կը դնէ միաբան ըլլալու համար. սակայն միաբանութեան մէջ ընդունուելիքը, արդէն իսկ վանքին մէջ միաբան է, բայց սարկաւազ, կամ վարդապետ չէ, այս օրէնքէն այսպէս կը հասկցուի որ այս տրամադրութիւնը դուրսէն եկողներու համար է:

Հ. ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ ԷՖ.— Միաբանութեան թիւը ճշդուած է՝ 70. Հրաժարման կամ մահուան պարագային, երբ մէկը պիտի մտնէ այս 70 թիւին մէջ կեդրոնը ձեռնամուխ պիտի ըլլայ այն պատճառով որ պիւտէի խնդիր է այս եւ մէկ կամ երկու միաբա-

նի աւելնալ կամ պակսիլը ծախքի ալ առաւելութիւն կամ նուազութիւն կ'ենթադրէ։ Ահաւասիկ այս է պատճառը Պոլիս հարցուելուն։

Տ. Ե. ՎՐԴ. ՊԱՊԱՅԵԱՆ.— Պակսած միաբանին տեղը բռնելու համար ուրաւակիրը սարկաւագ պիտի ձեռնադրուի եւ անոր տեղը անցնի, ասոր մէջ ի՞նչ կայ հարցուելիք։

ԳԵՂԱՄ ԷՖ. Տ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ.— Մեր վանքերը իրենց ժառանգաւորաց վարժարաններուն մէջէն կը հանեն զանոնք՝ որ ընդունակութիւն ունին սարկաւագ ըլլալու։ Այդ կերպով դուրսէն շատ քիչեր կան զիմում ընող։ Ուրեմն իրենց մէջէն պիտի առնուի, ես ալ կը կարծեմ որ պէտք է ճշդութիւն ատկկա։

Տ. ԶԱՐԱՄԱՅՐ ՔԶՆՅ.— Խնդիրը սա է. երբ վախճանման կամ ուրիշ պատճառով մը միաբան մը պակսեցաւ, այդ պարագային է որ նոր մարդ պիտի ընտրուի եւ այն ատեն ընտրելին օրինական պայմանները պիտի ճշդուին։ Ազգ. Ժողովը պիտի ընդունի՞ որ այս խնդիրը Խառն Ժողովին ենթարկուի։

ԳԵՂԱՄ ԷՖ. Տ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ.— Ո՛չ թէ ընտրութեան պարագային, այլ ձեռնադրութեան պարագային պիտի ստուգուի թէ միաբան կրնան ըլլալ։

ԳՍՍՊԱՐ ԷՖ. ՆԵՄՅԷ.— Աւելորդ կը նկատեմ Խառն Ժողովին խրկելու պարագան։ Կ'ըսեն թէ Պատրիարքը իշխանութիւն չունի, այս կերպով բնականաբար աւելի կը ջլատի իր ոյժը։

Մ. ԷՖ. ՀԱՅԿԱԶՆ.— Նոր անգամի մը բացատրութիւնը մութ է. եկեղեցական մըն ալ կրնայ դիմել, նոյնպէս սարկաւագ մը, ասիկա միւսէն որոշելու է։

Տ. ՀՄԱՅԵԱՆ ՔԶՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ.— Ես ալ այդ յօդուածը լուսաբանուած չեմ գտնիր։ Գիտենք որ Երուսաղէմի մէջ քա-

հանայի ձեռնադրութիւն չի կատարուիր, այլ վարդապետի կամ սարկաւագի. ուրեմն կրօն. Ժողովը պէտք է դիտնայ անոր բարոյականը։ Երբ նոր մէկը պիտի մտցուի Միաբանութեան մէջ, պէտք է որ արտօնուի Կեդրոնի կրօն. Ժողովէն։

ՀԱՅԿ ԷՖ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ.— Երբ խնդիրը վարդապետի ձեռնադրութեան վրայ ըլլայ, կրօն. Ժողովը պէտք է հաստատէ, Բայց միաբաններու թիւին անխախտութիւնը պահելու համար ուղեցինք որ միաբանի նշանակումը Կեդրոնին կապուած ըլլայ։ Ինչպէս ըսի, պիտե՞ն խնդիր է ասիկա։ Եթէ Կեդրոնը իր ձեռքին մէջ չունենայ միաբանի անուանման խնդիրը, այն ատեն Միաբանութիւնը կրնայ իր թիւը 70էն 80ի կամ 100ի բարձրացնել եւ կամ 50ի զեղչել իր ուզածին պէս։ Կեդրոնին պահանջածը շատ համեստ է։

ՀՄԱՅԵԱՆ ԷՖ. ԱՐԱՄԵԱՆՅ.— Կը տեսնուի թէ սկզբունքին դէմ ոչ ոք հակառակ է։ Զեռնադրութեամբ Միաբանութեան կոչուելիք անդամի մը քննութիւնը կախում ունի Կեդրոնէն։

Տ. ԵՂԻՇԷ ԱՐԲ. ԴՈՒՐԵԱՆ.— Ընտրութիւնները կրնան ժառանգաւորաց վարժարանէն կամ դուրսէն ըլլալ։ Միաբանութիւնը իր մէջէն, իսկ եթէ դպրոց չունի եւ կամ աշակերտները հասած չեն, դուրսէն անդամ պիտի ուղէ։ Դիտուած կէտը ասոր համար է, եւ ո՛չ թէ ներսէն ընտրուելիք անդամին համար է։ Այլապէս դպրոցականներուն թուղթերը կամ ինքնութիւնը ի՞նչ պիտի քննուին։ Այս բանին համար ոտնձգութիւն մը ըրած պիտի ըլլանք, երբ ըսենք թէ այսպիսի մանրամասնութիւններով պիտի զբաղինք, ինչ որ չեմ կարծեր։ Հետեւաբար, պէտք է յաւելում մը ընել դուրսէն եղած պարագային համար։

Տ. ՎԱՀՐԱՄ ԱՐԲ. ՄԱՆԿՈՒՆԻ.—

Յօդուածին այն պարբերութիւնը թէ Խառն Ժողովի վաւերացումէն ետքը միաբան պիտի նկատուին, ես ոտնձգութիւն կը համարիմ Պատրիարքի իրաւունքին դէմ։ Պոլիսը բացարձակ միջամտութիւն կ'ընէ, բան մը որ նոյն իսկ Սահմանադրութեան Երուսաղէմի Պատրիարքին տուած դիրքին հետ ալ չեմ կրնար հաշտեցնել։ Պոլսոյ Պատրիարքի իրաւասութեան ներքեւ գտնուող վիճակներու մէջ ձեռնադրուելիք վարդապետները կրօն. Ժողովը ինք պէտք է հաստատէ, Բայց այսպէս չէ Երուսաղէմի համար։ Եթէ անգամ մը դատաւարտելի ըլլայ, հոս չեն գիմեր, հոն կը պատժեն եւ տեղեկագիր կուտան. նոյնպէս եւ աստիճանի բարձրացման համար հարկ չկայ որ Պոլիս գիմին։ Ըսել է Պատրիարքին իրաւունքը կ'ուրացուի։ Հոն պէտք է կատարուի ընտրութիւնը եւ հոս տեղեկութիւն տրուի, ինչպէս կ'ընեն դատաւարտածներուն համար։ Իսկ եթէ յօդուածը այս կերպով ընդունուի, այն ատեն հարկ կ'ըլլայ փոխել Սահմանադրութեան մէջ Երուսաղէմի Պատրիարքին վերաբերեալ տրամադրութիւնները՝ հակասութիւն յառաջ չբերելու համար։

Յ. ԷՖ. ՇԱՀՐԻԿԵԱՆ.— Սրտազանր կ'արտայայտուի նոյն իսկ, այն ոգիին դէմ որ Հայաստանեայց եկեղեցիները եղած է, ինչպէս եւ այն նպատակին ու սկզբունքներուն դէմ զորս այս Ժողովը որդեգրած է։ Հայաստանեայց եկեղեցին կաթողիկէ կեղեցի չէ։ Երուսաղէմի միաբանութիւնը չարիք է եղեր ազգին գլխուն եւ մենք կ'ուզենք վերջնել այդ չարիքը մէջտեղէն այս կանոնադրութեամբ։ Հայաստանեայց եկեղեցին դարեւոր ընթացքին իր պաշտօնականները քահանայէն մինչեւ կաթողիկոս, Ժողովուրդին հաւանութեանը եւ քուէին ենթարկած է։ Մենք կաթողիկէներ չենք, եթէ միաբանութեան պակսած անդամը եպիսկոպոս է՝ վարդապետներէն, եթէ վարդապետ է՝ սարկաւագներէն պիտի առնուի նոր անդամը, Բայց ո՞ր տեղէն պիտի առնուի ան. ժառանգաւորաց վար-

ժարանէն թէ ուրիշ տեղէ, պատահեցաւ որ ուրիշ տեղէ մը առնէ, ահա՛ հոս է որ Միաբանութիւնը իր դէմը կ'ըլլոր չպիտի առնէ։ Եւ որովհետեւ մենք վստահ չենք այդ Միաբանութեան վրայ, հարկ է որ ազգը իր քօնթրօլը դնէ միաբաններու ընտրութեան վրայ։ Մենք ըսեր ենք՝ Ընդհ. Ժողովին, ուրիշներ՝ Խառն Ժողովին։ Արդ, կրնայ պատահիլ որ Միաբանութեան պակսած անդամը սարկաւագ ըլլայ եւ դուրսէն ներկայացողը որ կրօնական աստիճան չունի, այստեղ եկեղեցական ձեռնադրութիւն ընդունի։ Ըսել է միաբան պիտի ըլլայ երբ որ ձեռնադրուի։

Տ. ՎԱՀՐԱՄ ԱՐԲ. ՄԱՆԿՈՒՆԻ.— Շահրիկեան էֆ. սկզբունքով, պէտք է վերելվայր փոխել հաստատուած դրութիւնը. բայց նախ Սահմանադրութիւնը փոխեցէք։

ԶԱՅՆԵՐ.— Ժողովուրդն է ընտրողը։

ԱՏԵՆ. ԷՖ.— Կ'առաջարկեմ որ Դուրսէն բառը աւելցուի։

Յ. ԷՖ. ՇԱՀՐԻԿԵԱՆ.— «Դուրսէն» կարելի չէ գործածել, քանի որ ներսինը արդէն միաբան է։

ԶԱՅՆԵՐ.— Շա՛տ լաւ, Շա՛տ լաւ։

ԱՏԵՆ. ԷՖ.— Ուստի աւագ մեծամասնութեամբ ընդունուեցաւ։

Յօդ. 5.— Պակսող ո եւ է անդամի տեղ նորի մը ընտրութիւնը կը կատարուի Միաբանութեան Ընդհանուր Ժողովին կողմէ առաջարկութեամբ Ա. Պատրիարքին։ Ընտրութեան տեղեկագիրը, ընտրելին կանոնական պայմանները լրացուցած ըլլալը ապացուցանող վաւերագրերով միապին, կը ղ.վուի Ազգ. Կեդր. Վարչութեան Խառն Ժողովին՝ որ կը քննէ զայն եւ ընտրութիւնը կը վաւերացնէ՝ եթէ Կրդ յօդուածին մէջ յիշուած արամադրութիւններուն համապատասխան գտնէ զայն։ Ընտրուող նոր անդամը Խառն Ժողովի

վաւերացումէն ետքը միայն միաբան կը նկատուի:

Մ. ԷՖ. ՀԱՅԿԱՋՆ.—Հոս պիտի հռչակենք թէ աջ-համարոյրի համար նուէր չպիտի տանք. բայց միաբանները նորէն թեզանքի տակէն բան մը պիտի առնեն, աւելի լաւ է որ նուէրները ձգուին իրենց:

Հ. ԷՖ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ.—Մոռնալ են տեսակէտով միաբանութիւնը բաւական հոգացուած կրնանք նկատել, այնպէս որ նուէրի կամ ժամուցի պէտք չի մնար: Բայց թէ պիտի կրնանք այս օրէնքով աւտոր առաջը առնել բոլորովին, ես չեմ հաւատար, բայց ամէն պարագային, այս օրէնքով բարոյական բարձրացման հիմ մը դրած կ'ըլլանք:

ՅՈՎՀ. ԷՖ. ՁԵՕԿԻԻՐԵԱՆ.—Ես կ'առաջարկեմ նուէրներ ընդունելու մէջ ազատ ձգել միաբանները, քանի որ անոնք ժողովուրդէն պիտի տրուին ինքնաբերաբար: Արգելքի զօրաւոր պատճառ չեմ տեսներ:

Տ. Ե. ՎՐԴ. ՊԱՊԱՅԵԱՆ.—Ձեռք կըրնար արգելել որ ուխտաւորը ժամուց չտայ երբ ան իր սրտէն բխածը կ'ուզէ սպըրդեցնել միաբանին ձեռքին մէջ:

ԺԱԳ. ԷՖ. ՍԱՅԱՊԱՆԵԱՆ.—Մենք ուխտաւորին չպիտի հարկադրենք որ ժամուց չտայ, բայց երբ անոր ըսենք որ միաբանին անունին ու հաղուստ-կապուստը ապահովուած է, ան արդէն պէտք չպիտի տեսնէ նուէր տալու:

Յ. ԷՖ. ՇԱՀՐԻԿԵԱՆ.—Մենք երկու նպատակ ունեցած ենք այդ տրամադրութիւնը գնելով. նախ՝ եթէ կրօնը սրբութիւն է, հարկ է ուրեմն որ փողի փոխարէն չծախուի ան: Միւսը այն է որ՝ երբ միաբանը իր ապրուստը ապահովուած տեսնէ, այլեւս հարստանալու միջոցներուն վրայ չպիտի խորհի, այլ միայն իր հոգեւորականի պարտականութիւնը պիտի կատարէ: Միաբանը սեփականութիւն չպիտի ունենայ. այս սկզբունքը պէտք է յայտա-

րարել: Մէկ կողմէ միաբանին սեփականութէր դառնալուն առաջը պէտք է առնել, միւս կողմէ՝ աջ-համարոյրի դրութիւնը՝ երբ մարդկային արժանապատուութիւնը նուազագոյնով դրութիւնը արգելել: Արդ աջ-համարոյրի դրութիւնը հաստատուած է ա՛յն ատեն երբ կարելի չէր կանոնաւոր թոշակի դրութիւնը հաստատել: Հիմա միաբանը այլեւս ժամուցներով ապրելու վիճակին մէջ չի գտնուիր: Կը մնայ ուխտաւորին տրամադրութեան խնդիրը: Մենք ո՛րքան ալ սահման դնել ուզենք ժամուցի դրութեան՝ ատոր առաջը մէկ անգամէն չենք կրնար առնել: Ան պիտի չարունակէ տակաւին. բայց հետզհետէ պիտի վարժուի ուխտաւորն ալ: Եւ սակայն, միաբանին համար ուժիկ սահմանելէ ետքը, մէյ մըն ալ թոյլ տալ իրեն որ ժամուց ալ առնէ, ասիկա Միաբանութիւն չըլլար այլեւս: Բայց թէ չենք կրնար քօնթրօլ ընել, եւ թէ միաբանը պիտի չարունակէ ժամուց ալ առնել, ասիկա այլեւս իր խղճին կը ձգուի: Իսկ երբ յայտնի կերպով արտօնուի ինքը միաբանը որ ժամուց եւս առնէ, պիտի տեսնէք որ ի՛նչ մեծ չարիքներ երեւան պիտի դան: Գոնէ՛ այս յօդուածին տրամադրութեամբ երկու չարեաց փոքրագոյնը ընտրած կ'ըլլանք:

Յ. ԷՖ. ՁԵՕԿԻԻՐԵԱՆ.—Ես համաձայն չեմ ատոր: Երուսաղէմը այն տեղն է ուր ուխտաւորը միշտ զգացումներով զեղուն կ'ըլլայ, եւ միշտ պիտի մղուի նուէր մը տալու իրեն առաջնորդող միաբանին: Եթէ արգելենք միաբանին նուէր ընդունիլ, այն ատեն անիկա գաղտագողի պիտի առնէ եւ այն ատեն գողութիւն գործած պիտի ըլլայ: Վերջապէս մենք վստահ չենք կրնար ըլլալ միաբանը միշտ նկարագրի բարձրութիւն ցոյց պիտի տայ իրեն եղած նուէրը չընդունելու չափ: Հետեւաբար կ'առաջարկեմ ժամուցի դրութիւնը ընդունիլ:

ԺԱԳ. ԷՖ. ՍԱՅԱՊԱՆԵԱՆ.—Բայց այն ատեն աչքը բաց եղող միաբանը չառաւելի նուէր պիտի առնէ, եւ չեղողը՝ ընդհակառակն: Ահաւասիկ ամենամեծ անպա-

տեհութիւն մը եւ վնասակար խտրութիւն մը:

ՄԱՐԿՈՍ ԷՖ. ՆԱԹԱՆԵԱՆ.—Նուէրներու առթիւ պէտք չէ վանքին նկատմամբ վարուինք այնպէս ինչպէս օթէլի մը որուն սպասաւորները կարենան արգիլուիլ նուէր առնելէ:

Մենք ի՛նչ իրաւունք ունինք արգելք դնելու ժողովրդային բարեպաշտական նուիրատուութեան: Եթէ Եւրոպայի մէջ միաբանները դրամ չեն առներ, պատճառը այն է որ անոնք բոլորովին նուիրուած են իրենց միաբանութեան, իրենց համար ծախքեր չունին եւ ճամբորդութեանց համար ալ դրամ չեն վճարեր, եւ ամէն դրութիւն ունին իրենց տրամադրութեան տակ: Կարելի չէ ուրեմն ըսել թէ ժամուց չպիտի տրուի, երբ ժողովուրդը ինքնաբերաբար կուտայ զայն:

Հ. ԷՖ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ.—Արդէն բացատրուեցաւ խնդիրը: Եթէ ժողովը կ'ուզէ աջ-համարոյրի դրութիւնը արգիլող պարբերութիւնը վերցնենք, պայմանաւ որ անոր հակառակը հաստատող բան մը չդրուի տեղը:

ԱՏԵՆ. ԷՖ.—Ուստի, այս վերջին փոփոխութիւնը կ'ընդունուի 4ի դէմ ձայներու աւագ մեծամասնութեամբ:

ՅՈՂ. Ե.—Միաբանութեան ամէն մէկ անգամ վանքի Տնտեսական Վարչութիւնէ հաւասարադէս պիտի ստանայ իր անձին համար վանքին մէջ բնակարան, սնունդ, զգեստ, վառելիք, լուսավառութիւն, բժշկական դարման ու խնամք եւ ու-

սումնական-կրթական զարգացման միջոցներ:

Վերոյիշեալներէն դուրս, անձնական ծախքերու համար թոշակներ պիտի վճարուին, որոնց քանակութիւնը պիտի սահմանուի առանձին հրահանգով եւ պիտեմէի օրինագծին համաձայն: Վանքէն դուրս բոլոր այն տեղերը ուր հինգ հոգիէ պակաս միաբանութիւն կայ, անոնց սնունդին եւ զգեստի փոխարէն որոշ գումար մը պիտի տրամադրուի անտեսական մարմնոյն կողմէ. իսկ հինգ հոգի կամ աւելի գտնուած տեղերը սեղանը ընդհանուր պիտի ըլլայ: Վանքէն դուրս, բայց վանքի վերաբերեալ պաշտօնի մը կոչուելու պարագային, միաբան մը պիտի ստանայ երթեւեկի ծախք եւ տեղոյն ու պարագային համեմատ անտեսական մարմնոյն կողմէ որոշուելիք սնունդի զգեստի ծախքեր:

Մանօթ.—Վանական սեղանները հասարակաց են եւ որ եւ է միաբան,— ինչ աստիճանի ալ պատկանի, — առանձին ճաշ պահանջելու իրաւունք չունի, բաց ի հիւանդութեան պարագայէն:

ԱՏԵՆ. ԷՖ.—Ատենը փակուած է, յաջորդ նիստին մնացեալ յօդուածներու քննութիւնը չարունակելու որոշմամբ: Փափաքելի է որ երեսփոխան տեսարք, ժողովէն դուրս ուսումնասիրութիւն եւ պատրաստութիւն ունենան եւ լուրջ վիճարանութեամբ աւարտենք այս աշխատութիւնը:

(Ատենը փակուեցաւ ժամը 6ին):

Ատենադպիր

Հ. Արամեանց

Ատենապետ

Տր. Ն. Տալաւարեան

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

1. Տ. Եղիշէ Արքեպս. Դուրեան
2. Տ. Վահրամ » Մանկունի
3. Տ. Զարմայր քհնյ. Կեղիւրեան
- 4.

(Բ. Վիճակ)

5. Տ. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան
6. Տ. Գրիգորիս Ծ. Վ. Պալազեան
7. Տ. Երուանդ Ծ. Վ. Բերտանեան
8. Տ. Սմբատ Ծ. Վ. Գազարեան

(Գ. Վիճակ)

9. Տ. Շմայեակ Արքեպս. Դիմաքսեան
10. Տ. Մաղաքիա Եպիսկ. Տէրունեան
11. Անանիա Վ. Հազարապետեան
12. Տ. Միքայէլ քհնյ. Աշենեան

(Դ. Վիճակ)

13. Տ. Արիստակէս Ա. քհնյ. Զիզմէնեան
14. Տ. Խորէն » Զարուհիւնեան
15. Տ. Յուսիկ » Քաջունի
16. Տ. Տաճատ » Փաշայեան

(Ե. Վիճակ)

17. Տ. Եղնիկ Ծ. Վ. Պապանեան
18. Տ. Շմայեակ Բաժ. Էքսէրեան
19. Տ. Բարձող » Թազըմեան
20. Տ. Աբէլ » Երէցեան

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

Եյուպ Ս. Եղիա

21. Օննիկ էֆ. Միւսսեան
22. Պետրոս էֆէնտի Հալաճեան
23. Պետրոս » Խօրասանեան
- 24.

Մագրիգիւղ

25. Երուանդ էֆէնտի Պէյազեան
26. Թագուր » Արեւեան
27. Տօքթ. » Մալխասեան
28. Յակոբ » Պոյասեան
29. Յովհաննէս » Իսազուլեան
30. Սարգիս » Պէրէկեան
- 31.

Պէյոյիւքտէրէ

32. Արշակ էֆէնտի Ալպոյանեան
33. Յովսէփ » Գազարեան

Սան-ՍԹԵՎԻԱՆՈ

34. Գեորգի էֆ. Լալանեան

Օրմազգիւղ

5. Խսիկ էֆէնտի Սըվանեան
336. Տ. Բ. Ստեփան էֆէնտի Թէրզեան

(Բ. Վիճակ)

Բերա-Գալը Բ-փաշա

37. Աստուածատուր էֆէնտի Իւշատրեան
38. Արամ » Շալաճեան
39. Արմենակ » Բալսեղեան
40. Գեորգ » Թորգմեան
41. Գիգոր » Շահլաճեան
42. Յովհաննէս » Չէօկիւնեան
43. Սարգիս » Միւսսեան
44. Տր. Վ. » Թորգմեան
45. Յովհան » Գալաճեան

Դարձաւ-Գնալը

- 46.

Գուրուշէշմէ

- 47.

Պէշիկմաշ

48. Տրդատ Պէյ Տատեան

Ֆէրիգիւղ

49. Եղուարդ էֆէնտի Գարակէօզեան
50. Շրանտ » Ասատուր
51. Մարկոս » Նաճանեան
52. Յակոբ » Պահրի

(Գ. Վիճակ)

Գատրգիւղ

53. Անտոն էֆէնտի Թարագ
54. Աղաթի » Ալասեան
55. Եղուարդ » Շիլինեան
56. Ներսէս » Օհանեան
57. Մկրտիչ » Աբգարեան
58. Պեննէ » Թորոսեան
59. Սարգիս » Էսմէրեան

Եննի-գարու

60. Պեննէ էֆէնտի Տէյրմէնեան
61. Վահան » Փափազեան

Պալաթ

62. Տօքթ. Կարապետ էֆէնտի Եաղուպեան
63. Յարութիւն էֆ. Մոստիլեան
64. Սարգիս » Սրենց
65. Շրանտ » Անդրէասեան

Սկիւտար Եննի-մանալլէ

66. Թորգոմ էֆէնտի Պոյանեան
67. Հմայեակ » Խոսրովեան
68. Վահան » Սուրենեան

(Դ. Վիճակ)

Գուճ գարու, Գուճգարուի դուրս

69. Դաւիթ էֆէնտի Տէր-Մովսէսեան
70. Համբարձում » Պոյանեան
71. Սարգիս » Սուրին
- 72.

Կէտիկ փաշա

73. Շմայեակ էֆէնտի Արամեանց
74. Յարութիւն » Ճանկիւլեան
75. Յակոբ » Աւետիսեան
76. Յակոբ » Նշանեան
77. Ներսէս » Զաքարեան

Սամաթիա Ս. Գեորգ

78. Գրիգոր էֆէնտի Զօհրապ
79. Լեւոն » Սամաթեան
80. Հայկ » Խօնասարեան
81. Պարգեւ » Փափազեան
82. Լեւոն » Սեղրոսեան
83. Ռուբէն » Փափազեան
- 84.

(Ե. Վիճակ)

Գուզկուն-Տուկ-Ինատիէ

85. Երուանդ էֆէնտի Խորասան
86. Լեւոն » Տէմիրճիպաշեան
87. Ռուբէն » Զարդարեան
88. Ոսկան » Մարտիկեան
89. Կոպեռնիկ » Խաչատուրեան

Թօփ-գարու

90. Գեորգ էֆէնտի Սիմէշեան
91. Երուանդ էֆէնտի Օտեան

Նաուլը-գարու

92. Նշան էֆէնտի Գալպեան
93. Տիգրան » Դանուկեան

Սամաթիա Ալմրմէրմէր

94. Պետրոս էֆէնտի Գալպեան
95. Բարսեղ էֆէնտի Աւետիսեան
96. Գարեգին » Տէմիրճիպաշեան
97. Յարութիւն » Շահրիկեան
98. Վարդգէս » Սէրէկիւլեան
99. Յակոբ » Միւսսեան

Բումէլի-ճիսար, Պոյաճը-գիւղ, Եննի-գիւղ

100. Աբրահամ էֆէնտի Տէր Յակոբեան

ԳԱՒԱՌԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

(Ա. Վիճակ)

Եգիպտոս

101. Վահան էֆէնտի Թէրզեան
102. Յակոբ էֆէնտի Պօննուգեան
103. Տօքթ. Փաշայեան էֆէնտի

Կարին

104. Սողոմոն էֆէնտի Տէր-Ազարեան
105. Արամ էֆէնտի Անգոնան

Մուշ

106. Գեղամ էֆէնտի Տէր-Կարապետեան
107. Զմէկաճագ-Զարսանճագ

Տրապիզոն

108. Օննիկ էֆէնտի Զիֆթի-Սարաֆ

(Բ. Վիճակ)

Աղձամար

109. Ա. Վոսմեան էֆէնտի

Բալու

110. Գամբէր էֆէնտի Շիլինեան

Եօզլատ

111. Աւետիս էֆէնտի Ճինիվիզեան

Կեսարիա

112. Վահան էֆէնտի Էսսեան

Հալէպ-Այնթապ

113. Սարգիս էֆէնտի Գնանեան

Նիկոմիդիա

- 114.

Պադուտ

115. Տօքթ. Ներսէս էֆէնտի Թիւլեան

Սղերդ

116. Սերովբէ էֆէնտի Նորատունկեան

(Գ. Վիճակ)

Ակն

117. Ատուլ էֆէնտի Երեցեան

Արարիկ

118. Արմաթի էֆէնտի Սարաֆեան

Եղեւսիա

119. Սեպուհ պէյ Էմիւնեան

Զգլիւնիա

120. Լեւոն էֆէնտի Տնտեսեան

Հաւն

121. Տէվլէմ էֆէնտի Տատրեան

Մալաթիա

- 122.

Պանտրմա-Պալլաքսի

123. Տիւրան էֆէնտի Երկանեան

Վան

- 124.

(Դ. Վիճակ)

Ադրիանուպոլիս

- 521

Ատանա

- 621 Արիստակէս էֆէնտի Գասպարեան

Բաղէշ

- 721 Աղեքսանդր էֆէնտի Փանոսեան
- Կուտինա-Աֆիս-Գարա-ճիսար
128. Զարեհ էֆէնտի Խօրասանեան

- Պրուսա
- Զ. Գասպար Էֆենտի Նեմցե
- Ռոտտմո
130. Միհրդատ Էֆենտի Հայլազն
Տիգրանակերտ
131. Տիգրան Էֆենտի Նազաշեան
Շիվրիկ
- 132.
- (Ե. Վինակ)
- Ամասիա—Մարզուան
133. Տիգրան Էֆենտի Մարտիկեան
Բարերդ
134. Յարուծիւն Էֆենտի Դարբինեան

- Գաղատիա
135. Տր. Խաչիկ Էֆենտի Պօլոսեան
Գոնեա
136. Բարթող Էֆենտի Զօրեան
Երզնկա
137. Գաբրիէլ Էֆենտի Նորատունկեան
Մարաշ—Ջէյթուն
138. Սմբատ Էֆենտի Բիւրատ
Շապին—Գարահիսար
139. Ժագ Էֆենտի Սալապալեան
Սերաստիա
140. Տօքթ. Նազարէթ Էֆենտի Տաղաւարեան

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

- Ա. Ատենապետ Գաբրիէլ Էֆ. Նորատունկեան
- Բ. , Տր. Տաղաւարեան Էֆենտի
- Գ. , Պարգև. Էֆ. Փափազեան

- Ա. Ատենադպիր Հմայեակ Էֆ. Արամեան
- Բ. , Երուանդ Էֆ. Պէյլազնեադ
- Գ. , Աղեքսանդր Էֆ. Փանոսեա

Ն Ա Խ Ա Ք Ն Ն Ի Զ Դ Ի Ի Ա Ն Ք

ԶԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Տ. Հմայեակ Արքեպս. Դիմաքսեան
- Բ. Արամ Էֆենտի Հալաճեան
- Գ. Արշակ Էֆենտի Ալոյաճեան

ԴԱՄՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Աստուածատուր Էֆենտի Խաչատրեան
- Բ. Մարկոս Էֆենտի Նաթանեան
- Գ. Հրանտ Էֆենտի Ասատուր

ԿԱԼՈՒԱԾՈՅ ԴԻԻԱՆ

- Ա. Պենոն Էֆենտի Տէլիմէնճեան
- Բ. Վահան Էֆենտի Էստեան
- Գ. Թորգոմ Էֆենտի Պոյաճեան

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Եգուարդ Էֆենտի Շիրինեան
- Բ. Խաչիկ Էֆենտի Սըվաճեան
- Գ. Էւոն Էֆենտի Տնտեսեան

ՅԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Յարուծիւն Էֆենտի Մոստիքեան
- Գ. Բարսեղ Էֆենտի Աւետիսեան
- Գ. Նշան Էֆենտի Դալլաճեան

ԻՐԱԽԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Տ. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան
- Բ. Դարեգլին Էֆենտի Տէմիրճիպաշեան
- Գ. ,

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Դաւիթ Էֆենտի Տէր-Մովսէսեան
- Բ. Հակոբ Է. Էնտի Խօճատարեան
- Գ. Յարուծիւն Էֆենտի Շահրիկեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Բարթող Էֆենտի Զօրեան
- Բ. Վահան Էֆենտի Թէքեան
- Գ. Ռուբէն Էֆենտի Զարգարեան

ԵԼՆԻՄՏԻՑ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲ

Գ Ի Ն 1 Ղ Ր Ո Ւ Շ

Սեփականութիւն Ա.գգ. Սցուկին, Ա.գգ. Ժողովոյ ծախուց յաշկացեալ
Կը ծախուի յազգային Խորհրդարան Ղալաքիոյ